

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ և
անկախ աուդիտորի եզրակացություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Ապրիլ 2021

Երևան

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Տարեկան ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորի եզրակացություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն

3	Անկախ աուդիտորի եզրակացություն
6	Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
7	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
8	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
9	Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
10	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
11	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ընկերության գտնվելու վայրը՝

Հայաստանի Հանրապետություն

Իրավական ձևը՝

Փակ բաժնետիրական ընկերություն

Հիմնական գործունեության նկարագիրը՝

Կազմակերպության գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում

Գլխավոր տնօրեն՝

Էդուարդ Մարտիրոսյան

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի բաժնետիրոջը

Եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմքեր» բաժնում ներկայացված հարցի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմքեր

2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հիմնական միջոցները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են 134.2 միլիարդ դրամով, որոնց գծով առկա է արժեզրկման հայտանիշ: Ինչպես նկարագրված է ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 12-ում, Ընկերությունը հիմնական միջոցների գծով 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարում ճանաչել է 6.2 միլիարդ դրամ գումարի չափով արժեզրկում: Մենք անկարող էինք ձեռք բերել բավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ նշված արժեզրկման գնահատման ճշտության վերաբերյալ, ինչպես նաև անկարող էինք ինքներս գնահատել հիմնական միջոցների փոխհատուցվող գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ՝ Ընկերության հիմնական միջոցների և գործունեության առանձնահատկությունների պատճառով: Հետևաբար մենք անկարող էինք որոշել հաշվետու ամսաթվի դրությամբ հիմնական միջոցների գծով հնարավոր արժեզրկման գումարը:

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք - աուդիտի շրջանակ

Ընկերության 2019թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը 2020թ.-ի հունիսի 19-ին արտահայտել է վերապահումով կարծիք այդ հաշվետվությունների վերաբերյալ: Վերապահման հիմքը վերաբերվում էր հիմնական միջոցների գծով արժեզրկված գումարի ճշտության ստուգման անհնարինությանը, ինչպես նաև հաշվետու ամսաթվի դրությամբ հիմնական միջոցների փոխհատուցվող գումարի գնահատմանը: Վերապահման հիմքը ունի ազդեցություն 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վրա: Տես այս եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմքեր» բաժինը:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամոռեմ կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի վրումն՝

• հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող

է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամուտությունը,

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն ղեպերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա ղեպերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու ղեպերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը և կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ


Համաձայն Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) միջև 2016թ. մայիսի 12-ին ստորագրված 8615-AM Վարկային համաձայնագրի 2-րդ բաժնի C.2.a.(vi) կետի, և ՀՀ Ֆինանսների նախարարության և Ընկերության միջև 2016թ. հունիսի 22-ին ստորագրված Ենթավարկային համաձայնագրի 4.14 կետի, Ընկերությունը պարտավորվել է չկրել որևէ ծախս, պարտք կամ պարտավորություն, և չտրամադրել վարկեր կամ դրամաշնորհներ Ընկերության հիմնական գործունեության՝ էներգիայի արտադրության հետ չկապված նպատակների համար:

Մեր կարծիքով, 2020 ղեկոտմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Ընկերությունը պահպանել է նշված վավերապայմանը:

20 ապրիլ 2021թ.

«Բի-Դի-Օ Սթրենգթ» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն




Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտի ղեկավար

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծան.	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ Վերաներկա- յացված*
Հասույթ	5	29,410,271	22,655,121
Վաճառքի ինքնարժեք	6	(33,330,407)	(23,433,416)
Համախառն վնաս		(3,920,136)	(778,295)
Այլ եկամուտ	7	2,208,354	1,151,766
Վարչական ծախսեր	8	(1,937,479)	(1,540,540)
Այլ գործառնական ծախսեր	9	(1,007,041)	(1,187,065)
Գործառնական վնաս		(4,656,302)	(2,354,134)
Ֆինանսական եկամուտ	10	1,502,491	1,163,340
Ֆինանսական ծախսեր	10	(2,901,399)	(1,224,716)
Փոխարժեքային տարբերություններից զուտ (կորուստ)/օգուտ		(7,126,868)	663,132
Վնաս մինչև հարկումը		(13,182,078)	(1,752,378)
Շահութահարկի գծով փոխհատուցում	11	384,766	10,314
Տարվա վնաս		(12,797,312)	(1,742,064)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(12,797,312)	(1,742,064)

(*) Նախորդ տարվա վերաբերյալ վերահաշվարկը ներկայացված է ծնթ.25-ում:

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 2021թ. ապրիլի 20-ին և ստորագրվել են վերջինիս անունից:


 Էդուարդ Մարտիրոսյան
 Գլխավոր տնօրեն




 Էմիլ Նիկողոսյան
 Գլխավոր հաշվապահ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծան	2020թ. հազ.դրամ	2019թ. հազ.դրամ
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր			
Իրացումից մուտքեր		35,324,116	26,270,236
Շնորհների ստացում		52,784	190,242
Այլ մուտքեր		34,265	20,331
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ		(6,355,991)	(5,646,218)
Մատակարարներին և այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ		(17,264,848)	(16,618,096)
Վճարված հարկեր և պարտադիր վճարներ		(5,352,511)	(5,480,964)
Այլ վճարումներ		(124,576)	(175,776)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսք		6,313,239	(1,440,245)
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր			
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերումից ելքեր		(1,536,415)	(250,510)
Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից մուտքեր		-	6,424
Ստացված տոկոսային եկամուտ		1,183,304	1,193,423
Ավանդներից ելքեր, զուտ		(10,813,870)	(909,906)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		(11,166,981)	39,431
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր			
Վարկերից և փոխառություններից մուտքեր	18	19,415,799	3,378,473
Վարկերի և փոխառությունների մարում	18	(11,538,258)	(62,753)
Վճարված տոկոսներ	18	(2,569,494)	(2,036,450)
Վարկերի գծով այլ վճարներ		(461,579)	-
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		4,846,468	1,279,270
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր		(7,274)	(121,544)
Դրամական միջոցների գծով փոխարժեքային տարբերություններ		1,705	(4,288)
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի		7,445	133,277
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի	17	1,876	7,445

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. ապրիլի 20-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Էդուարդ Մարտիրոսյան
 Գլխավոր տնօրեն

Էմիլ Նիկողոսյան
 Գլխավոր հաշվապահ



«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Կանոնադրական կապիտալ հազ. դրամ	Պահուստային կապիտալ հազ. դրամ	Լրացուցիչ կապիտալ հազ. դրամ	Կուտակված շահույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդ առ 1 հունվարի 2019թ.	14,663,599	954,943	1,585,206	32,033,822	49,237,570
Տարվա վնաս (վերաներկայացված*)	-	-	-	(1,742,064)	(1,742,064)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք				(1,742,064)	(1,742,064)
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2019թ. (վերաներկայացված)	14,663,599	954,943	1,585,206	30,291,758	47,495,506
Մնացորդ առ 1 հունվարի 2020թ. (վերաներկայացված*)	14,663,599	954,943	1,585,206	30,291,758	47,495,506
Տարվա վնաս	-	-	-	(12,797,312)	(12,797,312)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(12,797,312)	(12,797,312)
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2020թ.	14,663,599	954,943	1,585,206	17,494,446	34,698,194


(*) Նախորդ տարվա գծով վերահաշվարկը ներկայացված է ծնթ.25-ում:

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2021թ. ապրիլի 20-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Էդուարդ Մարտիրոսյան
Գլխավոր տնօրեն



Էմիլ Նիկողոսյան
Գլխավոր հաշվապահ



«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

1. Ընդերձութիւն ՄԱՍԻՆ	11
2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ.....	13
3. ՆՇԱՆԱԿԱԼԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ և ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	13
4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ - ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	14
5. ՀԱՍՈՒՅԹ.....	19
6. ՎԱՃԱՌՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔ	19
7. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ.....	19
8. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ.....	20
9. ԱՅԼ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	20
10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ.....	20
11. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ.....	20
12. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ.....	22
13. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ.....	25
14. ՊԱՇԱՐՆԵՐ	25
15. ԱՌԵՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ	26
16. ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ	26
17. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ և ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ.....	26
18. ՎԱՐԿԵՐ և ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	27
19. ԱԿՏԻՎՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ.....	28
20. ԱՌԵՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ.....	29
21. ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ	29
22. ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ.....	30
23. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	30
24. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	32
25. ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ՄԽԱԼԻ ՈՒՂՂՈՒՄ	37
ՀԱՎԵԼՎԱԾ Ա – ՖՀՄՍ 13 ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՉԱՓՄԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ	38

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. Ընկերության մասին

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը (Ընկերություն) ստեղծվել է 1994թ. հոկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի և վառելիքի նախարարության Հայկական ատոմային էլեկտրակայան» ՀՆՁՊ փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորելու մասին թիվ 492 որոշման հիման վրա:

Ընկերությունը գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Արմավիրի շրջանային բաժանմունքում 1996թ. հուլիսի 29-ին՝ Հայաստանի հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Ընկերության բաժնետոմսերի 100%-ը պատկանում է Հայաստանի հանրապետության Կառավարությանը:

Ընկերությունը գործում է հետևյալ լիցենզիաներով՝

- Էլեկտրաէներգիայի և հզորության արտադրության լիցենզիա, որը տրվել է 1999թ. հունիսի 21-ին Հայաստանի Հանրապետության Էներգետիկ հանձնաժողովի կողմից, վավեր է մինչև 2024թ. հունիսի 10-ը,
- Միջուկային տեղակայանքների շահագործման լիցենզիա, որը տրվել է 2011թ. ապրիլի 1-ին Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առնաթեր Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից, վավեր է մինչև 2021թ. ապրիլի 7-ը,
- Ռադիոակտիվ նյութերի ներմուծման լիցենզիա, որը տրվել է 2006թ. սեպտեմբերի 7-ին Հայաստանի հանրապետության Կառավարությանն առնաթեր Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից, վավեր է մինչև 2021թ. սեպտեմբերի 7-ը,
- Ռադիոակտիվ նյութերի օգտագործման լիցենզիա, որը տրվել է 2006թ. մայիսի 4-ին Հայաստանի հանրապետության Կառավարությանն առնաթեր Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից, վավեր է մինչև 2026թ. մայիսի 4-ը:
- Գործունեության ապահովման հետ կապված այլ անհրաժեշտ լիցենզիաներ:

Ընկերության գործունեությունը, այդ թվում սակագների քաղաքականությունը, կարգավորվում է Հայաստանի հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից:

ՀՀ Կառավարության՝ 1996թ. ապրիլի 4-ի թիվ 98 որոշման համաձայն Ընկերությունը հանդիսանում է միջուկային տեղակայանքի շահագործող և գործում է ատոմային էներգիայի ոլորտին վերաբերող միջազգային պայմանագրերի համաձայն, որոնք վավերացվել են Հայաստանի հանրապետության կողմից:

Կանոնադրության համաձայն Ընկերության հիմնական գործունեությունն ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անվտանգ և արդյունավետ շահագործումն է, ինչպես նաև էլեկտրաէներգիայի արտադրությունը, վաճառքն ու արտահանումը:

Ընկերության արտադրական հզորությունները ներառում են երկու էներգաբլոկ: Համաձայն ԽՍՀՄ Նախարարների խորհրդի որոշման՝ 1989թ. անվտանգության նկատառումներով երկու էներգաբլոկների շահագործումը դադարեցվել է: 1993թ. ՀՀ Կառավարությունը որոշում է ընդունել վերսկսել ատոմակայանի գործունեությունը, որի նպատակով մշակվել են հայեցակարգեր և անվտանգության միջոցառումների անհրաժեշտ գործողությունների ցանկ: 1995թ. նոյեմբերի 5-ին վերսկսել է թիվ 2 էներգաբլոկի գործունեությունը:

Ներկայումս Ընկերությունն իրականացնում է երկու ծրագիր.

- Թիվ 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման ծրագիր, համաձայն ՀՀ Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև 2015թ. փետրվարի 5-ին

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

կնքված պայմանագրի և Ընկերության և Ֆինանսների նախարարության միջև 2020թ. հուլիսի 10-ին կնքված վարկային պայմանագրի: Աշխատանքները պլանավորվում է ավարտել 2021-2022թթ.:

- Էներգետիկ հատվածի ֆինանսական վերականգնման ծրագիր, որը ֆինանսավորվում է Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի կողմից 2016թ. մայիսի 16-ին կնքված համար 8615-AM վարկային պայմանագրի միջոցներով: Ծրագրի նպատակն է էներգիա արտադրող պետական ընկերությունների և էներգիայի բաշխման մասնավոր ընկերության ֆինանսական վիճակի բարելավման միջոցով աջակցել Հայաստանի հանրապետության ջանքերը էլեկտրաէներգիայի համապատասխան և հուսալի մատակարարումը պահպանելու հարցում:

Ընկերությունն արտադրում է Հայաստանի Հանրապետությունում սպառվող էլեկտրաէներգիայի մինչև 40%-ը:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1,634 աշխատակից (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,670 աշխատակից):

Գործարար միջավայր

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գնահատականն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

Նոր տիպի կորոնավիրուսի (COVID-19) լայն աշխարհագրական տարածումը հաշվեկշռային ժամանակահատվածում և դրա ներխուժումը ՀՀ տարածք, ինչպես նաև Հայաստանի ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից մինչև ապրիլի 14-ը արտակարգ դրություն սահմանելու մասին ՀՀ Կառավարության որոշումը զգալի ազդեցություն է ունեցել Հայաստանի տնտեսության վրա: Համավարակի կանխարգելմանն ուղղված միջոցառումների անցկացման՝ այդ թվում ճանապարհորդության արգելման, կարանտինի, ոչ հիմնական ծառայությունների մատուցման ժամանակավոր արգելման հետևանքով բազմաթիվ ընկերություններ և անհատներ հարկադրված են եղել երկարաժամկետ կամ անորոշ ժամանակահատվածով սահմանափակել կամ դադարեցնել իրենց գործունեությունը, ինչի հետևանքով ՀՀ Կառավարությունը ձեռնարկել է տնտեսական միջոցառումների ծրագրեր՝ համավարակի տնտեսական ազդեցության չեզոքացման նպատակով: Համաճարակի հետագա տևողությունը և ազդեցությունը, ինչպես նաև հիմնախնդրի հաթախարմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը այս պահին շարունակում են մնալ անորոշ:

Ի լրումն, 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած պատերազմն ընդդեմ Արցախի հանրապետության ստեղծել է քաղաքական և տնտեսական ճգնաժամերի էական նախադրյալներ, որը որպես հետևանք առաջացրել է դրամի նկատմամբ դոլարի փոխարժեքի արժևորման ներդրողների ընդհանուր տրամադրվածության նվազման և ֆինանսական շուկաներում անորոշությունների և տատանումների ավելացման:

Այսպիսի գործառնական միջավայրն էական ազդեցություն ունի Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Ընկերության գործունեության կայունությունն ապահովելու նպատակով, այդուհանդերձ ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից՝ Ղեկավարությունը հնարավորություն չունի արժանափավատ գնահատական տալ, թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Ընկերության հետագա տարիների ֆինանսական վիճակի վրա:

2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՄ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՀՀՄՄ-ներ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 24-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության գործառնական արժույթը: Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

ՀՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիման վրա բացառությամբ բաժնետոմսերում ներդրումները, որոնք չափվել են իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

ա. 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ:

Առկա չեն նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտել 01.01.2020թ.-ից հետո, և որոնք ունեցել են նշանակալի ազդեցություն Ընկերության հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

բ. Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՀՀՄՄ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ

Առկա չեն հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած նոր ստանդարտները, մեկնաբանությունները և փոփոխությունները, որոնք կունենան կամ հնարավոր է ունենան էական ազդեցություն Ընկերության հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

- Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ (Ծանոթագրություն 24)

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում ներկայումս իրականացվող՝ ատոմակայանի շահագործման ժամկետի երկարացման ծրագրի հիման վրա, համաձայն որի ատոմակայանի շահագործման ժամկետը կերկարացվի ևս 10 տարով, ծրագրի մեկնարկից պահից: Եթե կայանի շահագործման ժամկետը իրականում երկարացվի ավելի քան 10 տարով, հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները կտարբերվեն ընթացիկ գնահատումներից, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Պաշարների արժեզրկման պահուստ (Ծանոթագրություն 14)

Ընկերության յուրաքանչյուր տարվա վերջում գնահատում և ճանաչում է արժեզրկման հայտանիշ ունեցող պաշարների, մասնավորապես դանդաղաշարժ կամ հետագա օգտագործման համար ոչ պիտանի պաշաների գծով, արժեզրկման գումարը:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված)
- Մակարդակ 2. Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից
- Մակարդակ 3. Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ
- Արտարժույթային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Մույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Մույն ֆինանսական

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Հնկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել (եթե այլ բան սահմանված չէ):

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Հնկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Առևտրային դեբիտորական պարտքեր
- Բանկային ավանդներ
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
- Այլ ֆինանսական ակտիվներ
- Վարկեր և փոխառություններ
- Առևտրային կրեդիտորական պարտքեր

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ խմբերի

Ֆինանսական ակտիվներ

	Ամորտիզացված արժեքով չափվող	
	2020թ.	2019թ.
	հազար դրամ	հազար դրամ
Բանկային ավանդներ	20,146,842	9,013,786
Առևտրային դեբիտորական պարտքեր	3,760,015	3,776,302
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,876	7,445
	23,908,733	12,797,533

	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող	
	2020թ.	2019թ.
	հազար դրամ	հազար դրամ
Ներդրումներ բաժնետոմսերում	41,804	41,804
	41,804	41,804

Ֆինանսական պարտավորություններ

	Ամորտիզացված արժեքով չափվող	
	2020թ.	2019թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Վարկեր և փոխառություններ	113,633,538	97,832,233
Առևտրային կրեդիտորական պարտքեր	9,314,921	14,006,225
	122,948,459	111,838,458

(գ) Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ներառում են առևտրային դեբիտորական պարտքերը, բանկային ավանդները, դրամական միջոցները և դրանց համարժեքները, վարկերը և փոխառությունները, առևտրային կրեդիտորական պարտքերը:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Առևտրային դեբիտորական պարտքերի, բանկային ավանդների, դրամական միջոցների և դրանց համարժեքների, վարկերի և փոխառությունների, առևտրային կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասարվում է իրական արժեքին :

Հավելված Ա-ում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների և վարկերի ու փոխառությունների իրական արժեքի որոշման հետ կապված նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացվում է Տնօրենների խորհրդի կողմից (բացառությամբ այն հարցերի որոնք վերապահված են Բաժնետերերի ընդհանուր ժողովին):

Տնօրենների խորհրդի նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով Ընկերության մրցունակության և ճկունության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Ընկերության միակ հաճախորդը «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ն է, որի գծով առկա չէ պարտքային ռիսկ, քանի որ դեբիտորական պարտքը վճարվում է առաջացմանը հաջորդող ամսվա ընթացքում:

Պարտքային ռիսկն առաջանում է նաև բանկերում պահվող դրամական միջոցներից և դրանց համարժեքներից և բանկային ավանդներից: Ընկերությունն իր միջոցները տեղաբաշխում է միայն հայաստանյան խոշորագույն բանկերում:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն առաջանում է Ընկերության տոկոսաբեր, առևտրային և արտարժույթային ֆինանսական գործիքներից: Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է տոկոսադրույքի (տոկոսադրույքային ռիսկ), արտարժույթային փոխարժեքի (արտարժույթային ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:

Իրական արժեքի և դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ

Ընկերության դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն առաջանում է փոփոխական տոկոսադրույքով երկարաժամկետ փոխառություններից: Պայմանագրային և արդյունավետ միջին տոկոսադրույքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 18-ում:

Փոփոխական տոկոսադրույքով վարկի տոկոսադրույքի 1% բարձր/ցածր լինելու դեպքում՝ մյուս փոփոխականների հաստատուն լինելու պարագայում, Ընկերության 2020թ.դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա զուտ շահույթը կնվազեր/կաճեր 21,547 հազար դրամով (2019թ.տարվա շահույթը կնվազեր/կաճեր 38,070 հազար դրամով):

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Արտաբաժնային ռիսկ

Արտաբաժնային ռիսկն առաջանում է, երբ Ընկերության գործարքներն արտահայտված չեն գործառնական արժույթով:

Այլ արժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների համար Ընկերությունը հղում է կատարում ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքներին հաշվետու ամսաթվի դրությամբ, որոնք ներկայացված են ստորև (արտաբաժնային մեկ միավորի արժեք արտահայտված ՀՀ դրամով).

	2020թ. ՀՀ դրամ	2019թ. ՀՀ դրամ
1 ԱՄՆ դոլար	522.59	479.70
1 Եվրո	641.11	537.26

2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության արտաբաժնային ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների ներկայացված է ստորև՝

	ԱՄՆ դոլար	
	31.12.2020թ. հազար դրամ	31.12.2019թ. հազար դրամ
Ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	244	367
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	244	367
Ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	85,544,670	88,130,685
Առևտրային կրեդիտորական պարտքեր	88,913	4,830,893
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	85,633,583	92,961,578
Զուտ դիրքը	(85,633,339)	(92,961,211)

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 10% արժևորումը (արժեզրկումը) այլ փոփոխականների հաստատուն մնալու պայմանով կհանգեցնի Ընկերության զուտ ակտիվների և տարվա ֆինանսական արդյունքի (նվազմանը)/աճին՝ 8,563,334 հազար դրամի չափով (2019թ.՝ 9,296,121 հազար դրամ):

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ընկերության գործող կապիտալի կառավարումից, ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

Համաձայն Ընկերության քաղաքականության՝ Ընկերությունը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ, որպեսզի կարողանա մարել սահմանված պարտավորությունները: Դրամական միջոցների բավարարությունը նաև ապահովվում է վարկային պայմանագրերից բխող չօգտագործված վարկային միջոցների օգտագործման հաշվին (Ծանոթագրություն 18):

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական պարտավորությունների (չգեղջված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

		Մինչև 3 ամիս հազ. դրամ	3-ից 6 ամիս հազ. դրամ	6-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավել հազ. դրամ	Ընդամենը չգեղջկած պարտավորու- թյուններ հազ. դրամ	Հաշվեկշռա- յին արժեք հազ. դրամ
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ								
Վարկեր և փոխառություններ	և	6,212,677	696,036	6,920,937	58,782,246	62,946,369	135,558,265	113,633,538
Առևտրային կրեդիտորական պարտքեր		1,904,371	-	-	-	7,410,550	9,314,921	9,314,921
		8,117,048	696,036	6,920,937	58,782,246	70,356,919	144,873,186	122,948,459
		Մինչև 3 ամիս հազ. դրամ	3-ից 6 ամիս հազ. դրամ	6-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավել հազ. դրամ	Ընդամենը չգեղջկած պարտավորու- թյուններ հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք հազ. դրամ
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ								
Վարկեր և փոխառություններ	և	4,762,365	42,543	5,977,803	45,540,980	55,200,756	111,524,447	97,832,233
Առևտրային կրեդիտորական պարտքեր		6,995,675	-	-	-	7,010,550	14,006,225	14,006,225
		11,758,040	42,543	5,977,803	45,540,980	62,211,306	125,530,672	111,838,458

Կապիտալի կառավարում

Ընկերությունը իր կապիտալը կառավարում է՝ ապահովելու համար Ընկերության շարունակական գործունեությունը և բաժնետիրոջ շահույթը:

Ընկերության կապիտալի կառուցվածքը ներառում է փոխառու միջոցները (ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորություններ) և սեփական կապիտալը (ներառող կանոնադրական կապիտալը, պահուստները, լրացուցիչ կապիտալը և կուտակված շահույթը):

Ընկերության՝ որպես կապիտալ կառավարվող գումարները հաշվետու տարվա համար ամփոփված են ստորև.

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Փոխառություններ	113,633,538	97,832,233
Հանած դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(1,876)	(7,445)
Հանած կարճաժամկետ բանկային ավանդներ	(20,146,842)	(9,013,786)
	93,484,820	88,811,002
Սեփական կապիտալ	34,698,194	47,495,506
Փոխառություններ/Կապիտալ հարաբերակցություն	2.7	1.9

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

5. Հասույթ

	2020թ.	2019թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Հզորության վաճառք	22,565,125	16,128,873
Էլեկտրաէներգիայի վաճառք	6,845,146	6,526,248
	29,410,271	22,655,121
Առաքված էլեկտրաէներգիա միլիոն կվտժ	2,552	2,029
Միջին սակագինը դրամ / կվտժ (առանց ԱԱՀ)	11.51	11.49

Ընկերության սակագները հաշվարկվում և սահմանվում են «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում ամրագրված սկզբունքների, ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) որոշումներով հաստատված սակագների հաշվարկման մեթոդիկայի հիման վրա: Սակագները սովորաբար վերանայվում են յուրաքանչյուր տարին մեկ անգամ: 2020թ.ընթացքում սակագինը փոխվել է 2 անգամ:

Ընկերության համար սահմանված արտադրված էլեկտրաէներգիայի և տրամադրված հզորության սակագները 1 կվտժ-ի համար (առանց ԱԱՀ) ներկայացված են ստորև

Մեկնարկի ամսաթիվ	Էլեկտրաէներգիա	Հզորություն
01-02-18	1.96	4,632.13
01-02-19	3.41	5,228.98
01-02-20	2.59	6,019.32
01-08-20	2.59	5,675.39

6. Վաճառքի ինքնարժեք

	2020թ.	2019թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Մաշվածություն և ամորտիզացիա	15,195,527	6,773,598
Միջուկային վառելիքի ինքնարժեք	7,619,307	6,623,445
Աշխատավարձ աշխատակիցներին	5,687,470	6,692,704
Օգտագործված նյութերի արժեք	1,793,174	1,071,754
Սպասարման և վերանորոգման ծախսեր	1,620,947	767,767
Գազ և էլեկտրաէներգիա	571,632	566,803
Ատոմակայանի շահագործման վճար	400,000	400,000
Անվտանգություն	399,185	399,185
Այլ ծախսեր	43,165	138,160
	33,330,407	23,433,416

7. Այլ եկամուտ

	2020թ.	2019թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Եկամուտ շնորհներից (Ծանոթագրություն 19)	2,139,343	1,062,525
Եկամուտներ տույժերից և տուգանքներից	15,767	6,001
Գործառնական վարձակալությունից եկամուտ	9,821	13,147
Եկամուտ հիմնական միջոցների վաճառքներից	-	6,148
Այլ եկամուտներ	43,423	63,945
	2,208,354	1,151,766

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

8. Վարչական ծախսեր

	2020թ.	2019թ.
	հազ.դրամ	հազ.դրամ
Հատուցումներ աշխատակիցներին	1,611,070	1,165,268
Մաշվածություն և ամորտիզացիա	146,942	175,198
Պարտադիր վճարներ	56,792	38,699
Ապահովագրական վճարներ	33,373	24,368
Փոտային և հաղորդակցման ծառայություններ	22,023	24,163
Գործուղման ծախսեր	6,872	46,965
Այլ	60,407	65,879
	1,937,479	1,540,540

9. Այլ գործառնական ծախսեր

	2020թ.	2019թ.
	հազ.դրամ	հազ.դրամ
Հիմնական միջոցների դուրսգրում (ծանոթագրություն 12)	523,843	543,180
Անդամակցության վճարներ	105,556	110,835
Արհմիության ծախսեր	82,674	85,528
Մաշվածություն և ամորտիզացիա	73,063	78,395
Հարկեր և տուրքեր	67,364	121,786
Հատուցումներ աշխատակիցներին	47,471	120,895
Վճարներ տուգանքներից	44,910	-
Այլ ծախսեր	62,160	126,446
	1,007,041	1,187,065

10. Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

	2020թ.	2019թ.
	հազ.դրամ	հազ.դրամ
Տոկոսային եկամուտ բանկային ավանդներից	1,502,491	1,163,340
Ընդամենը ֆինանսական եկամուտ	1,502,491	1,163,340
Տոկոսային ծախսեր ՀՀ Ֆինանսների նախարարությունից ստացված վարկերի և փոխառությունների գծով	(2,901,399)	(1,189,327)
Ֆինանսական ծախս կրեդիտորական պարտքի գեղջման հակադարձումից	-	(35,389)
Ընդամենը ֆինանսական ծախսեր	(2,901,399)	(1,224,716)
	(1,398,908)	(61,376)

11. Շահութահարկի գծով փոխհատուցում

	2020թ.	2019թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Ժամանակավոր տարբերությունների գծով հարկային փոխհատուցում	(401,642)	(126,369)
Նախորդ տարվա շահութահարկի ճշգրտում	16,876	116,055
Ընդամենը շահութահարկի գծով հարկային փոխհատուցում	(384,766)	(10,314)

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը 18% է (2019թ.՝ 20%):

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Արդյունավետ տոկոսադրույքի համադրում

	2020թ.		2019թ.	
	հազ. դրամ	Արդյունավետ հարկային դրույքաչափ %	հազ. դրամ	Արդյունավետ հարկային դրույքաչափ %
Վնաս հարկումից առաջ	(13,182,078)		(1,752,378)	
Շահութահարկի գծով փոխհատուցում՝ 18%/20%	(2,372,773)	18.0%	(350,476)	20.0%
Հարկային նպատակով չնվազեցվող ծախսեր, զուտ	1,323,570	(10.0%)	716,849	(40.9%)
Հարկային վնասի հետաձգված ակտիվի դուրսգրում	544,977	(4.1%)	-	-
Հարկային ակտիվի դուրսգրում	102,584	(0.8%)	-	-
Նախորդ տարվա շահութահարկի ճշգրտում	16,876	(0.1%)	-	-
Զանաչված հետաձգված հարկային ակտիվի օգտագործում վնասի գծով	-	-	(163,786)	9.3%
Հարկային օրենսդրության փոփոխության ազդեցությունը	-	-	(212,901)	12.2%
Ժամանակաշրջանի շահութահարկի գծով փոխհատուցում	(384,766)	2.9%	(10,314)	0.6%

Հետաձգված հարկային պարտավորությունների, շահույթում կամ վնասում ճանաչված գումարների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված գումարների մանրամասները ներկայացված են ստորև.

	2019թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	(Հաշվեգրված)/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին	2020թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. Դրամ
Հիմնական միջոցներ	(2,362,268)	454,645	(1,907,623)
Պաշարներ	102,403	(37,874)	64,529
Տրված փոխառություններ	4,932	-	4,932
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	338,826	(15,129)	323,697
	(1,916,107)	401,642	(1,514,465)
	2018թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ	(Հաշվեգրված)/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին	2019թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. Դրամ
Հիմնական միջոցներ	(3,020,099)	657,831	(2,362,268)
Պաշարներ	119,241	(16,838)	102,403
Տրված փոխառություններ	364,068	(359,136)	4,932
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	330,528	8,298	338,826
Փոխանցված հարկային վնաս	163,786	(163,786)	-
	(2,042,476)	126,369	(1,916,107)

Ստորև ներկայացվում է Ընկերության չճանաչված հարկային վնասն ըստ առաջացման տարիների և գործողության ժամկետների.

Առաջացման տարի	Գործողության ժամկետ	Հարկային վնաս հազ. դրամ	Զանաչված հետաձգված հարկային ակտիվ հազ. դրամ
2020թ.	31/12/2025	3,027,649	544,977

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

12. Հիմնական միջոցներ

	Հոդ	Շենք Շինություն	Փոխանցող հարմարանք	Մեքենա Սարքավորում ներ	Տրանսպորտային միջոցներ, արտադրատնտեսական գույք և այլն	Անավարտ շինարարու թյուն	Ընդամենը
Հազար դրամ							
Մկրբնական արժեք							
1 հունվարի 2019թ.	7,612,620	22,488,769	9,156,469	60,315,454	17,251,013	62,843,674	179,667,999
Ավելացումներ	-	30,975	7,777	1,377,322	2,119,493	25,270,431	28,805,998
Օտարումներ/դուրսգրումներ	-	-	(91,775)	(814,881)	(1,921,142)	(1,175)	(2,828,973)
Ներքին շարժեր	-	-	-	21,542,354	7,187,980	(28,730,334)	-
31 դեկտեմբերի 2019թ.	7,612,620	22,519,744	9,072,471	82,420,249	24,637,344	59,382,596	205,645,024
Ավելացումներ	-	79,000	5,978	2,741,484	428,534	4,783,651	8,038,647
Օտարումներ/դուրսգրումներ	-	-	-	(36,590)	(1,954,722)	-	(1,991,312)
Վերադասակարգումներ	-	-	-	-	-	-	-
Կաշարներից/(կաշարներից)	-	-	-	2,129,915	1,564	(302,976)	1,828,503
Ներքին շարժեր	-	(414,962)	(591,615)	54,917,561	(15,521,141)	(38,389,843)	-
31 դեկտեմբերի 2020թ.	7,612,620	22,183,782	8,486,834	142,172,619	7,591,579	25,473,428	213,520,862

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

	Հոդ	Շենք Շինություն	Փոխանցող հարմարանք	Մեքենա Սարքավորում ներ	Տրանսպորտային միջոցներ, արտադրատնտեսա կան գույք և այլն	Անավարտ շինարարությ ուն	Ընդամենը
Հազար դրամ							
Կուտակված մաշվածություն և արժեզրկում							
1 հունվարի 2019թ.	-	14,455,002	6,172,998	33,578,493	6,134,505	172,969	60,513,967
Տարվա հաշվարկ	-	1,142,880	366,173	5,025,151	422,913	-	6,957,117
Օտարումներ/դուրսգրումներ	-	-	(61,468)	(1,218,001)	(1,006,324)	-	(2,285,793)
Ներքին շարժեր	-	-	(32,016)	(1,049,342)	1,081,358	-	-
31 դեկտեմբերի 2019թ.	-	15,597,882	6,445,687	36,336,301	6,632,452	172,969	65,185,291
1 հունվարի 2020թ.							
Տարվա հաշվարկ	-	1,131,976	368,844	13,520,110	332,274	-	15,353,204
Օտարումներ/դուրսգրումներ	-	-	-	(31,499)	(1,435,970)	-	(1,467,469)
Վերադասակարգումներ	-	-	-	212,982	-	-	212,982
Կաշարներից/(կաշարներից)	-	-	-	212,982	-	-	212,982
Ներքին շարժեր	-	(461,384)	(564,688)	506,639	519,433	-	-
31 դեկտեմբերի 2020թ.	-	16,268,474	6,249,843	50,544,533	6,048,189	172,969	79,284,008
Զուտ հաշվեկշռ. արժեք							
1 հունվարի 2019թ.	7,612,620	8,033,767	2,983,471	26,736,961	11,116,508	62,670,705	119,154,032
31 դեկտեմբերի 2019թ.	7,612,620	6,921,862	2,626,784	46,083,948	18,004,892	59,209,627	140,459,733
31 դեկտեմբերի 2020թ.	7,612,620	5,915,308	2,236,991	91,628,086	1,543,390	25,300,459	134,236,854

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Անավարտ շինարարությունը ներառում է Թիվ 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների արժեք, կապված ծրագրի կառավարման, էներգաբլոկի համակարգերին բացադրիչների մնացորդային ռեսուրսների գնահատման, ինչպես նաև որոշակի սարքավորումների արժեք: 2014թ.մարտի 27-ին ՀՀ կառավարությունը վավերացրել է ատոմակայանի Թիվ 2 էներգաբլոկի շահագործման ժամկետը 10 տարով երկարաձգելու ծրագիրը: Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 1-ում, ՀՀ Կառավարության և ՌԴ Կառավարության միջև 2015թ.փետրվարի 5-ին կնքվել է պայմանագիր վերոնշյալ ծրագիրը ֆինանսավորելու նպատակով: Ծրագիրն իրականացվում և կառավարվում է «Ռոսատոմ Սերվիս» ԲԸ-ի կողմից: Երկարաձգման աշխատանքների արդյունքում ատոմակայանի շահագործման ժամկետը կերկարաձգվի մինչև 2026թ, ընդ որում երկարաձգման աշխատանքները պլանավորվում է ավարտել 2021-2022թ.:

2020թ.կապիտալացված փոխառության ծախսումների գումարը կազմել է 591,911 հազար դրամ (2019թ.կազմել է 1,320,711 հազար դրամ), որն առաջացել է նպատակային վարկերի նկատմամբ կիրառված փոխառության ծախսումներից (ծանոթագրություն 18):

2017թ.Ընկերությունը գնահատել է իր հիմնական միջոցները անկախ գնահատողի միջոցով, որի արդյունքում ճանաչվել է 6,195,070 հազար դրամ գումարի չափով արժեզրկումից կորուստներ:

2020թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մաշված հիմնական միջոցների արժեքը կազմել է 8,233,279 հազար դրամ (2019թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 8,247,861 հազար ՀՀ դրամ):

Մաշվածության գծով ծախսն ըստ ֆինանսական հաշվետվությունների հոդվածների բաշխվել է հետևյալ կերպ.

	2020թ.	2019թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Վաճառքի ինքնարժեք	15,171,550	6,752,161
Վարչական ծախսեր	129,900	150,543
Այլ գործառնական ծախսեր	51,754	54,413
	15,353,204	6,957,117

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

13. Ոչ նյութական ակտիվներ

	Բանաձևեր	Լիցենզիաներ, ապրանքանիշեր, համակարգչային ծրագրեր	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Սկզբնական արժեք			
1 հունվարի 2019թ.	695,544	186,900	882,444
Ավելացում	108,553	20,080	128,633
31 դեկտեմբերի 2019թ.	804,097	206,980	1,011,077
Ավելացում	-	20,100	20,100
31 դեկտեմբերի 2020թ.	804,097	227,080	1,031,177
Կուտակված ամորտիզացիա			
1 հունվարի 2019թ.	627,684	150,186	777,870
Տարվա հաշվարկ	39,889	30,185	70,074
31 դեկտեմբերի 2019թ.	667,573	180,371	847,944
Տարվա հաշվարկ	34,816	27,512	62,328
31 դեկտեմբերի 2020թ.	702,389	207,883	910,272
Հաշվեկշռային արժեք			
1 հունվարի 2019թ.	67,860	36,714	104,574
31 դեկտեմբերի 2019թ.	136,524	26,609	163,133
31 դեկտեմբերի 2020թ.	101,708	19,197	120,905

Ամորտիզացիայի գծով ծախսը ըստ ֆինանսական հաշվետվությունների հոդվածների բաշխվել է հետևյալ կերպ.

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Վաճառքի ինքնարժեք	23,977	21,437
Վարչական ծախսեր	17,042	24,655
Այլ գործառնական ծախսեր	21,309	23,982
	62,328	70,074

14. Պաշարներ

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Միջուկային վառելիք ռեակտորում	8,126,868	9,704,323
Հումք	1,621,520	2,263,624
Պահեստամասեր	1,379,347	2,563,567
Վառելիք	142,743	131,801
Միջուկային վառելիք պահեստում	111,130	6,152,983
Այլ	433,364	715,368
	11,814,972	21,531,666

Տարվա ընթացքում ծախս ճանաչված պաշարների գումարը կազմում է 9,595,051 հազար դրամ: Պաշարների կազմում ներառված է պահեստամասերի և այլ հումքի գծով արժեզրկման պահուստը՝ 349,672 հազար դրամի չափով (2019թ. 573,178 հազար դրամ):

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

15. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2020թ.	2019թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Առևտրային դեբիտորական պարտքեր	3,736,331	3,768,123
Այլ դեբիտորական պարտքեր	23,684	8,179
Ընդամենը ֆինանսական ակտիվներ՝ բացառությամբ դրամական միջոցների և դրանց համարժեքների	3,760,015	3,776,302
 Տրված կանխավճարներ	3,393,147	1,318,967
Հարկերի գծով կանխավճար	19,527	1,328,891
Այլ	4,623	-
	3,417,297	2,647,858
	7,177,312	6,424,160

2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերը հանդիսանում են «Հայկական էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ից ստացվելիք միջոցները:

16. Բանկային ավանդներ

Ֆինանսական հաստատություն	Արժույթ	Տոկոսադրույք	Մարման ժամկետ	Մնացորդը	Մնացորդը
				2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկ 1	ՀՀԴ	10.75%	15/07/2021	2,717,596	-
Բանկ 1	ՀՀԴ	10.75%	13/08/2021	8,002,784	-
Բանկ 2	ՀՀԴ	11.70%	15/07/2021	9,426,462	-
Բանկ 1	ՀՀԴ	12.26%	13/08/2021	-	9,013,786
Ընդամենը				20,146,842	9,013,786

17. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2020թ.	2019թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Բանկային հաշիվներ	1,874	2,693
Կանխիկը դրամարկղում	2	4,752
	1,876	7,445

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

18. Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները տրամադրվել են ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից ենթավարկային պայմանագրերի շրջանակներում, որոնք ֆինանսավորվել են Ռուսաստանի Դաշնության ու Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի հետ կնքված միջազգային պայմանագրերի շրջանակներում տրամադրված միջոցների հաշվին, ինչպես նաև պետական բյուջեի հաշվին

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից տրամադրված վարկերը և փոխառություններն ըստ պայմանագրերի.

	Արժույթ	Մարման ժամկետ	Պայմանագրային տոկոսադրույք (%)	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
ՌԴ միջկառավարական վարկ	ԱՄԴ	10-07-29	3.00%	81,263,260	84,323,727
ՌԴ միջկառավարական վարկի համաֆինանսավորում	ՀՀԴ	10-07-29	3.00%	8,817,502	9,137,643
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ*	ԱՄԴ	15-11-40	1.25%*	4,281,503	3,806,999
Ֆինանսների նախարարությունից բյուջետային վարկ	ՀՀԴ	30-12-35	0.75%	544,376	563,864
Փոխառություն ֆինանսների նախարարությունից	ՀՀԴ	10-07-32	7.5%	18,726,897	-
				113,633,538	97,832,233

* Վարկի տոկոսադրույքը լողացող է և հավասար է Բազային դրույքաչափի և Փոփոխական Մպրեդի գումարին, ինչպես սահմանված է ՀՀ Կառավարության ու Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի հետ կնքված միջև 2016թ. մայիսի 12-ին կնքված 8615-AM վարկային պայմանագրում:

Ստորև աղյուսակում բերված են վարկային պայմանագրերն ըստ ընթացիկ և ոչ ընթացիկ մասերի.

	Ընթացիկ 2020թ. հազ. դրամ	Ընթացիկ 2019թ. հազ. դրամ	Ոչ ընթացիկ 2020թ. հազ. դրամ	Ոչ ընթացիկ 2019թ. հազ. դրամ	Ընդամենը 2020թ. հազ. դրամ	Ընդամենը 2019թ. հազ. դրամ
ՌԴ միջկառավարական վարկ	10,048,886	9,386,375	71,214,374	74,937,352	81,263,260	84,323,727
ՌԴ միջկառավարական վարկի համաֆինանսավորում	1,092,135	1,006,651	7,725,367	8,130,992	8,817,502	9,137,643
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ	7,038	14,508	4,274,465	3,792,491	4,281,503	3,806,999
Ֆինանսների նախարարությունից բյուջետային վարկ	62,754	62,754	481,622	501,110	544,376	563,864
Փոխառություն ֆինանսների նախարարությունից	26,897	-	18,700,000	-	18,726,897	-
	11,237,710	10,470,288	102,395,828	87,361,945	113,633,538	97,832,233

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

ՌԴ Միջկառավարական վարկ

Համաձայն Ռուսաստանի Դաշնության և և ՀՀ Կառավարության միջև 2015թ. փետրվարի 5-ին կնքված պայմանագրի Ռուսաստանի Դաշնությունը ՀՀ Կառավարությանը տրամադրել է 270,000 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ միջպետական վարկ և 30,000 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհ (Ծանոթագրություն 19) Հայկական Ատոմային Էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի ֆինանսավորման նպատակով: Համաձայնագրով վարկի տրամադրման վերջնաժամկետ էր սահմանված 2019թ. դեկտեմբերի 31-ը, սակայն 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ օգտագործվել է ընդամենը 173,575 հազար ԱՄՆ դոլար: Արդյունքում Ընկերությունը պայմանագրի համաձայն հաշվեգրել է կոմիսիոն վճար՝ չօգտագործված գումարի 1%-ի՝ 462,553 հազար դրամի չափով, որը ներառված է Ծանոթագրություն 10-ում ներկայացված ֆինանսական ծախսերին կազմում:

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի ֆինանսավորման նպատակով լրացուցիչ վարկային միջոցների անհասանելիությամբ պայմանավորված, ՀՀ կառավարությունը 2020թ. հունիսի 11-ին ընդունել է N593-Ն որոշումը, համաձայն որի ՀՀ տարածքում ատոմակայանի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ֆինանսավորման նպատակով 2020-2022թթ. ընթացքում ՀՀ պետական բյուջեից Ընկերությանը տրամադրվել է երկարաժամկետ վարկ՝ 63,200,000 հազար դրամի չափով: 2020թ. ընթացքում վարկից օգտագործվել է 18,700,000 հազար դրամ:

Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ

Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկը 2016թ. մայիսի 16-ին կնքված 8615-AM վարկային պայմանագրի համաձայն ՀԱԷԿ ՓԲԸ-ին վերաֆինանսավորման նպատակով տրամադրել է 8,550 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ վարկ ՀՀ Էներգետիկայի ոլորտի Ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման նպատակով: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ վարկային պայմանագրի շրջանակներում չօգտագործված վարկային միջոցները կազմել են 186,642 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 294,436 հազար դրամ):

Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրումը հետևյալն է.

	2020	2019
	հազ. դրամ	հազ. դրամ
Տարեսկզբի մնացորդ	97,832,233	75,440,578
Դրամական միջոցների մուտքեր վարկերի ներգրավումից	19,415,799	3,378,473
Ոչ դրամային ավելացումներ	-	19,183,033
Տոկոսների հաշվեգրում շահույթ վնասում (Ծան. 10)	2,901,399	1,189,327
Տոկոսների հաշվեգրում – կապիտալացում հիմնական միջոցների վրա (Ծան. 12)	591,911	1,320,711
Այլ միջնորդավճարներ	-	10,340
Մայր գումարի մարում դրամական միջոցներով	(11,538,258)	(62,753)
Տոկոսների մարում դրամական միջոցներով	(2,569,494)	(2,036,450)
Արտարժույթով վերհաշվարկ	6,999,948	(591,026)
Տարելերջի մնացորդ	113,633,538	97,832,233

19. Ակտիվներին վերաբերող շնորհներ

	31.12.2020թ.	31.12.2019թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Տարեսկզբի մնացորդ	13,610,510	12,260,489
Տարվա ընթացքում ստացված	431,774	2,412,546
Ճանաչված շահույթում կամ վնասում (Այլ եկամուտների կազմում)	(2,139,343)	(1,062,525)
	11,902,941	13,610,510

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Բնչպես նկարագրված է Ծանոթագրություն 1-ում և 18-ում, համաձայն Ռուսաստանի Դաշնության և ՀՀ Կառավարության միջև կնքված համաձայնագրի Ռուսաստանի Դաշնությունը ՀՀ Կառավարությանը տրամադրել է միջպետական վարկ՝ ՀՀ տարածքում ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետը երկարաձգելու ծրագիրը ֆինանսավորելու համար: Նույն համաձայնագրով ամրագրվել է, որ Ռուսաստանի Դաշնությունը 30,000 հազար ԱՄՆ դոլարի անհատույց օգնություն է տրամադրելու Ընկերությանը վերոնշյալ ծրագրի իրականացման նպատակով:

Բացի վերը նկարագրածից Ընկերությունը չնորհներ է ստանում նաև ՀՀ Կառավարությունից և այլ միջազգային ֆինանսավորող կազմակերպություններից:

20. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	2020թ.	2019թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Ատոմակայանի շահագործման վճարների գծով պարտավորություններ	7,410,550	7,010,550
Միջուկային վառելիքի գծով կրեդիտորական պարտք	-	4,286,228
Հիմնական միջոցների ձեռքբերումներ	1,410,390	1,911,231
Կոմիսիոն վճարի գծով պարտավորություն	-	462,553
Այլ պարտավորություններ	493,981	335,663
Ֆինանսական գործիք պարտավորություն ճանաչված	9,314,921	14,006,225
Պարտքեր աշխատակիցներին	2,143,553	2,241,212
Վճարվելիք հարկեր և տուրքեր	332,953	423,879
	11,791,427	16,671,316

Որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ դասակարգված առևտրային կրեդիտորական պարտքերի իրական արժեքը հաշվեկշռային արժեքից էականորեն չի տարբերվում:

21. Սեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 14,663,599 հազար դրամ, որը բաղկացած է յուրաքանչյուրը 3,665,899.8 դրամ անվանական արժուրդությամբ 4,000 սովորական բաժնետոմսից:

Պահուստային կապիտալ

Կանոնադրության համաձայն Ընկերությունը պետք է կանոնադրական կապիտալի 15%-ի չափով պահուստային կապիտալ ստեղծի: Պահուստային կապիտալը ստեղծվել է կուտակված շահույթից կատարված մասհանումների մասով:

Լրացուցիչ կապիտալ

Լրացուցիչ կապիտալն իրենից ներկայացնում է բաժնետիրոջից ստացված փոխառությունների իրական արժեքի և պայմանագրային գումարի միջև տարբերությունը:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

22. Կապակցված կողմերի միջև գործարքներ

Ընկերության բաժնետոմսերի 100% սեփականատեր և վերջնական վերահսկող կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(ա) Գործարքներ բաժնետիրոջ հետ

Բաժնետիրոջից ստացված փոխառությունների և տոկոսային ծախսերի վերաբերյալ տեղեկությունը ներկայացված է Ծանոթագրություն 10-ում և 18-ում:

(բ) Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

	2020թ.	2019թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Աշխատավարձ և այլ հատուցումներ	160,154	63,457

23. Պայմանական պարտավորություններ

23.1 Պատճառված հնարավոր վնասի համար պատասխանատվություն

«Միջուկային վնասի համար քաղաքացիական պատասխանատվության մասին» Վիեննային կոնվենցիայի համաձայն Ընկերությունը որպես միջուկային կայանքի շահագործող պարտավոր է փոխհատուցել ատոմակայանի շահագործման արդյունքում պատճառված միջուկային ցանկացած վնաս: Փոխհատուցման գումարը, կարգն ու ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Վերոհիշյալ կոնվենցիայի համաձայն փոխհատուցման գումարը կարող է սահմանափակվել առնվազն 5,000,000 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր միջուկային պատահարի համար: Օրենսդրության համաձայն Ընկերությունը պարտավոր է ունենալ բավարար ֆինանսական միջոցներ պատճառված հնարավոր ցանկացած վնասի պատասխանատվությունը ծածկելու համար: Ընկերությունը վերոնշյալ պայմանները բավարարելու համար պետք է տարեկան 150,000 հազար դրամի չափով մասհանումներ կատարի: Նշված գումարը ներառված է Ընկերության էլեկտրաէներգիայի տարեկան սակագնում: Ընկերության ֆինանսական հաշվետվություններում այս պարտականության վերաբերյալ պահուստ չի ստեղծվել, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ միջուկային պատահարի հավանականությունը չնչին է:

23.2 Ապահովագրություն

Ընկերությունը ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ Ընկերության գործունեության հետևանքով:

23.3 Պայմանական պարտավորություններ դատական հայցերի գծով

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև մինչև այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթիվը Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական վիճակի վրա:

23.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի:

Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

23.5 Հարկային ռիսկեր

Հայաստանի հարկային, փոխարժեքային և մաքսային համակարգերը բնորոշվում են օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգմանն ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ պատշաճ կերպով է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

23.6 Գնումների գծով պարտականություններ

31 դեկտեմբեր 2020թ. դրությամբ Ընկերությունը ունի կապիտալ ներդրումների գծով չկատարված 1,441,037 հազար դրամ պարտավորություններ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,751,587 հազար դրամ):

23.7 Ատոմակայանի շահագործումից հանելու պարտականություն

Ընկերությունը լիազորվել է (ստացել է լիցենզիա) իրականացնելու Պետության սեփականություն հանդիսացող Ատոմակայանի անվտանգ շահագործումը, որի շրջանակում սակագնի մեջ նեղում է նաև N 2 էներգաբլոկի շահագործումից հանելու Պետության կողմից սահմանված ֆիքսված գումար, որը տարեկան պարտավոր է փոխանցել Պետության կողմից տնօրինվող հատուկ հաշվին, որպես N 2 էներգաբլոկի շահագործման վճար:

Ընկերության տրված լիցենզիայի գործողության դադարեցման դեպքում անվտանգության ապահովման նրա պատասխանատվությունն անցնում է Պետությանը:

Ընկերությունը չունի իրավական կամ այլ պարտավորություն ատոմակայանի շահագործումից հանելու նկատմամբ: Ընկերությունը հանդես է գալիս որպես պետական օբյեկտի անվտանգ շահագործման համար լիազորված (լիցենզավորված) կազմակերպություն, որը շահագործման ընթացքում պետության է վճարում սահմանված վերոնշյալ տարեկան շահագործման վճարը:

24. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

24.1. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ Դրամը: Այն հանդիսանում է նաև Ընկերության այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը՝ հազարների ճշտությամբ:

24.2 Գործարքներ արտարժույթով

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժույթային շուկայում արտարժույթի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները եւ պարտավորությունները վերագնահատվում են հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ որոշվող դրությաչափերով: Չմարված դրամային ակտիվների եւ պարտավորությունների վերագնահատման արդյունքում առաջացող փոխարժեքային տարբերությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

24.3 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները սկզբնապես ճանաչվում են սկզբնական արժեքով, իսկ հետագայում չափվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Հողամասերի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Կառուցման ընթացքում գտնվող ակտիվների գծով մաշվածությունը սկսվում է հաշվարկվել, երբ ակտիվները ավարտուն են և պատրաստ օգտագործման: Մնացած բոլոր հիմնական միջոցների գծով հաշվարկվում է մաշվածություն՝ դրանց հաշվեկշռային արժեքը ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի ընթացքում բաշխելու նպատակով:

Ընկերության կողմից ճանաչված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը մեկը ներկայացված է ստորև.

Հիմնական միջոցներ

Օգտակար ծառայության ժամկետ

Շենքեր և շինություններ	20-50 տարի
Փոխանցող հարմարանքներ	10 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	5-10 տարի
Տրանսպորտային միջոցներ	10 տարի
Այլ	1-10 տարի

24.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետը կազմում է 2-5 տարի:

24.5 Պաշարներ

Պաշարները հավառվում են ինքնարժեքի և հնարավոր իրացման գուտ արժեքի նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը հաշվառվում է՝ օգտագործելով առաջին մուտք-առաջին ելք (ԱՄԱԵ) և ներառում ներառում է ձեռքբերման ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Միջուկային վառելիք

Միջուկային վառելիքը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է պաշարների կազմում: Վառելիքը ստացվում է հատուկ տարաներով, որոնք ռեակտորում տեղադրվելուց հետո օգտագործվում են 5-6 տարի: Միջուկային վառելիքը ճանաչվում է որպես ծախս՝ հիմնվելով ամսական ինժեներական հաշվարկների և բանաձևերի վրա: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին ծախսագրված գումարը համապատասխանեցվում է փաստացի օգտագործված վառելիքի ծախսին:

24.6 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում (կամ հանվում) են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝

- ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱՇԿԿ),
- բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱԱՀՖԱ),
- գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ:

Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

ա) «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող».

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» այն դեպքում, երբ այն չի դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող (ինչպես նկարագրված է ստորև) և ոչ էլ որպես ԻԱԱՀՖԱ չափվող (ինչպես նկարագրված է ստորև): Բացի այդ, սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել որպես ԻԱՇԿԿ չափվող ցանկացած ֆինանսական ակտիվ, որը բավարարում է ամորտիզացված արժեքով չափվելու կամ ԻԱԱՀՖԱ չափվելու համար ներկայացվող պահանջները, եթե այդպես անելը վերացնում կամ նշանակալիորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունը, որն այլապես կարող էր առաջանալ:

բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ)

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ), եթե

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն ապահովվում է ինչպես պայմանագրային դրամական հոսքերը հավաքելով, այնպես էլ ֆինանսական ակտիվները վաճառելով, և
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

գ) «ամորտիզացված արժեքով չափվող»

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «ամորտիզացված արժեքով չափվող», եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿՎ չափվող՝

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար, և
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

Ընկերությունն իր ֆինանսական ակտիվները իրենցից մեծամասամբ ներկայացնում են ամորտիզացված արժեքով չափվող ակտիվներ: Այս ակտիվները հիմնականում առաջանում է էլեկտրաէներգիայի իրացումից առևտրային դեբիտորական պարտքից, ինչպես նաև ներառում են այլ ֆինանսական ակտիվներ, որոնց նպատակն է այդ ակտիվները պահել, պայմանագրային դրամական հոսքերի հավաքման նպատակով, իսկ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը իրենցից գուտ ներկայացնում են մայր գումարի և տոկոսների վճարումներ: Դրանք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, գումարած գործարքների գծով ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են դրանց ձեռքբերման կամ թողարկման հետ, եւ հետագայում դրանք չափվում են ամորտիզացված արժեքով, օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ նվազեցման արժեքը կման պահուստը:

Ընկերության ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ներառում են առևտրային դեբիտորական պարտքեր, բանկային ավանդները, դրամական միջոցները եւ դրանց համարժեքները, ինչպես նաև այլ ֆինանսական ակտիվները: Դրամական միջոցները եւ դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները և ցպահանջ ավանդներ բանկերում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառվում են վարկերը և փոխառությունները և առևտրային կրեդիտորական պարտքերը:

Ընկերությունն իր ֆինանսական պարտավորությունները դասակարգում է որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» կամ «ամորտիզացված արժեքով չափվող» կախված պարտավորության ստանձնման նպատակից:

Ընկերությունը չունի «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» որևէ ֆինանսական պարտավորություն:

Ստորև ներկայացված է Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը որպես «ամորտիզացված արժեքով չափվող» դասակարգված ֆինանսական պարտավորությունների համար:

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են

ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացիոն արժեքով:

24.7 Արժեզրկում

Ընկերության հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու՝ արդյոք առկա՞ է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են այդ ակտիվի (կամ ակտիվների խմբի) փոխհատուցվող գումարները և համեմատվում հաշվեկշռային արժեքի հետ: Եթե գնահատված փոխհատուցվող գումարը փոքր է, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև գնահատված փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Նմանապես, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատվում է պաշարների արժեզրկված լինելը՝ պաշարի յուրաքանչյուր հոդվածի (կամ միանման պաշարների խմբի) հաշվեկշռային արժեքը դրա վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, հետ համեմատելու միջոցով: Եթե պաշարի հոդվածը (կամ միանման պաշարների խումբը) արժեզրկվել է, դրա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, իսկ արժեզրկումից կորուստը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Եթե արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ակտիվի (կամ ակտիվների խմբի) հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև դրա փոխհատուցվող գումարի վերանայված գնահատականը (պաշարների դեպքում, վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումներ), սակայն ոչ ավելի, քան այն գումարը, որը կորոշվեր, եթե նախորդ տարիներին ակտիվի (կամ ակտիվների խմբի) գծով ոչ մի արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

24.8 Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն վերագրելի են որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, Ընկերության կողմից կապիտալացվում են որպես այդ արժեքի մաս: Ընկերությունն այլ փոխառության ծախսումներն ճանաչում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք կատարվել են:

24.9 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում է շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

24.10 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գեղջման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և կիրառելիության դեպքում պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

24.11 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են, երբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և դրանց համապատասխան հարկային բազաների միջև առկա են տարբերություններ:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը սահմանափակվում է այն դեպքում, երբ հավանական է, որ կառաջանա հարկվող շահույթ, որի դիմաց ժամանակավոր տարբերությունները հնարավոր կլինի օգտագործել:

Հետաձգված հարկային ակտիվները կամ պարտավորությունները չափում են՝ կիրառելով հարկային դրույքաչափերը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ակնկալվում է, որ կկիրառվեն, երբ հետաձգված հարկային պարտավորությունները/ (ակտիվները) կմարվեն/(կփոխհատուցվեն):

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա ընթացիկ հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերաբերում են հարկերին, որոնք գանձվում են նույն հարկային մարմնի կողմից:

24.12 Հասույթ

Գատարողական պարտականություն եւ հասույթի ճանաչման պահը

Ընկերության հասույթը առաջանում է էլեկտրաէներգիայի վաճառքից և հզորության տրամադրումից, որոնց գծով հասույթը ճանաչվում է վերահսկումը պատվիրատուին փոխանցելու պահին: Վերահսկման փոխանցումը հիմնականում տեղի ունի, երբ էլեկտրաէներգիան առաքվում է հաճախորդին: Վերահսկողության փոխանցման պահը որոշելու համար նման դեպքերում չի պահանջվում բարդ դատողություն: Երբ էլեկտրաէներգիան առաքվել է համաձայնեցված վայր, ապա դրանից հետո Ընկերությունը այլևս չունի տնօրինման իրավունք, սովորաբար ձեռք է բերում վճարման ստացման իրավունք:

Գործարքի գնի որոշում և գնի բաշխում կատարողական պարտականությունների վրա

Ընկերության հասույթները ստացվում են ֆիքսված գների պայմանագրերից եւ, հետևաբար, յուրաքանչյուր պայմանագրից ստացված հասույթի գումարը որոշվում է այդ ֆիքսված գներով, ընդ որում յուրաքանչյուր ապրանքի համար ֆիքսված է միավորի գինը:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

25. Նախորդ տարիների սխալի ուղղում

Սույն ֆինանսական հաշվետվություններում նախորդ տարվա համադրելի տեղեկատվությունն ուղղվել է՝ ներառելով վարկի չօգտագործված մնացորդի նկատմամբ կիրառված միջնորդավճարի ճանաչումը համապարփակ ֆինանսական արդյունքի հաշվետվությունում կապված 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկի չօգտագործված մնացորդի սպառման հետ: Միջնորդավճարը նախորդ տարվա ֆինանսական հաշվետվություններում ճանաչվել էր որպես վարկի ամորտիզացված արժեքի մաս: Համապատասխանաբար ճշգրտվել է նաև ճշգրտման հետաձգված հարկի ազդեցությունը:

Սխալի ուղղման ազդեցությունը 2019թ. ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա ներկայացված է ստորև.

	2019թ. դեկտեմբերի 31	Ճշգրտում	2020թ. հունվարի 1
	հազար դրամ	հազար դրամ	Վերահաշվարկված հազար դրամ
Վարկեր և փոխառություններ	97,369,680	462,553	97,832,233
Հետաձգված հարկային պարտավորություն	1,999,367	(83,260)	1,916,107

Սխալի ուղղման ազդեցությունը 2019թ. համապարփակ ֆինանսական արդյունքի հաշվետվության վրա ներկայացված է ստորև.

	2019թ. հազար դրամ	Ճշգրտում հազար դրամ	2019թ. Վերահաշվարկված հազար դրամ
Ֆինանսական ծախսեր	(762,163)	(462,553)	(1,224,716)
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	(72,946)	83,260	10,314

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Հավելված Ա – ՖՀՄՄ 13 Իրական արժեքի չափման բացահայտումներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

Հոդված	Իրական արժեք մին ՀՀ դրամ	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Բանկային ավանդներ	20,146,842	Կարճաժամկետ (12 ամսից պակաս) տրված բանկային ավանդների հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:	Մակարդակ 2	Կիրառելի չէ
Առևտրային դեբիտորական պարտքեր	3,760,015	Կարճաժամկետ (12 ամսից պակաս) դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:	Մակարդակ 2	Կիրառելի չէ
Վարկեր և փոխառություններ	113,633,538	Վարկերի և փոխառությունների հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:	Մակարդակ 2	Կիրառելի չէ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	9,314,921	Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:	Մակարդակ 2	Կիրառելի չէ